ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Երաժշտություն>> (11 դասաժամ), <<Հասարակագիտություն>> (7 դասաժամ), <<Կերպարվեստ>> (3 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. Ինքնակենսագրություն (Ձև 4).
5. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. դեկտեմբերի 2-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00} -ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. դեկտեմբերի 18-ին՝ ժամը 14^{00}-ին Շիրակի մարզի Լուսաղբյուրի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Շիրակի մարզ, Անի համայնք, գյուղ Լուսաղբյուր, 4-րդ փողոց, շենք17:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093851866 հեռախոսահամարով: